655

Էլմ. 829 ՀԵ 88 (հր.2008)

1. Ապըրված մի կյանք կա՝ մեղմ, ներդաշնակ,
Անդ՝ Գալիլիայում՝ ազդու և հստակ,
Տիպար մարդասեր, եղբայր, հարազատ,
Խղճի առաջնորդ, անբիծ, անարատ:
Վեմ է անսասան, ճամփա՝ փրկարար,
Ուղի՝ ապահով ու երջանկարար:

Փառք Քեզ, Հարուցյալ, Արքա փառավոր,
Տե՛ր ամենակալ,
Փառք Քեզ (3), հավիտյան:

2. Մատուցված մի զոհ կա՝ սուրբ պատարագ
Անդ՝ Գողգոթայում, Գառնուկ երկնառաք,
Իր մահը խոսուն, իր մահը անմահ,
Պահեց խաչն հզոր, սանդուղք դեպ իր գահ:
Փրկի՛չ անձնըվեր, Քո մահն աննըման
Աղբյուրն է սիրո հավիտենական:

3. Հաղթական մի անձ կա՝ սուրբ և հզոր,
Անդ՝ վերը բազմած, ներշնչողն այսօր,
Հարուցյալ Փրկիչ, Արքա փառավոր,
Իշխան, Կյանք անբավ, սրտով վեհ, անդորր:
Ընկճյալ հաղթեց Նա, օ՛, անարգ մահվան,
Բազուկ Բարձրյալի, մեծ եղբայր մարդկանց:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025